

## ՋԵԿՈՒՑԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ  
ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մուսալեռի համայնքապետարանը իր աշխատանքային գործունեությունը կազմակերպել է ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներով: Ըստ բնագավառների իրականացվել են հետևյալ աշխատանքները.

### *Քաղաքացիների իրավունքների պաշտպանության բնագավառում*

Կատարել է քաղաքացիների ընդունելություն, օրենքով սահմանված կարգով քննության է առել քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները և ձեռնարկել է համապատասխան միջոցներ:

Միջոցներ է ձեռնարկել պաշտպանելու համայնքի բնակիչների ու տնտեսվարող սուբյեկտների իրավունքներն ու օրինական շահերը:

Հրավիրել և վարել է Մուսալեռ համայնքի ավագանու 11 նիստ: Արձակել է 33 կարգադրություն, ընդունել 41 որոշում: Տրվել է 1349 տեղեկանք: Ելից գրությունների թիվը՝ 317, մտից գրությունների թիվը՝ 310:

### *Ֆինանսների բնագավառում*

Օրենքով սահմանված կարգով կազմակերպել է գույքահարկի՝ շինությունների 4 878 880 դրամ /տարեկան պլանային ցուցանիշը՝ 3 630 000 դրամ/, փոխադրամիջոցների 8 558 369 դրամ / տարեկան պլանային ցուցանիշը՝ 8 140 000 դրամ/, հողի հարկի 7 312 788 դրամ /տարեկան պլանային ցուցանիշը՝ 6 150 000 դրամ/, տեղական տուրքերի՝ 426 800 դրամ / տարեկան պլանային ցուցանիշը՝ 609 300 դրամ/, վարձակալական հողերի վճարների՝ 137 475 դրամ /տարեկան պլանային ցուցանիշը՝ 262 400 դրամ/, այլ եկամուտների՝ 3 523 380 դրամ, / տարեկան պլանային ցուցանիշը՝ 3 583 000 դրամ/ ցանձում:

Մուսալեռ համայնքի բնակիչ հանդիսացող թվով 130 անձանց տրվել է դրամական օժանդակություն՝ 4 700 000 դրամ, այդ թվում նորածին երեխաների ընտանիքներին, հարազատին կորցրած ընտանիքներին, պարտադիր զինվորական ծառայությունից զորացրված երիտասարդներին, սոցիալապես անապահով, ինչպես նաև բուժման կարիք ունեցող անձանց:

Համայնքապետարանը աշխատավարձի գծով պարտքեր չունի:

### *Պաշտպանության բնագավառում*

Լրացվում է Մուսալեռ համայնքի զինապարտ քաղաքացիների հաշվառման գրանցամատյանը:

2017 թվականի ընթացքում զորացրվել է թվով 6 զինվոր: Զորացրվածներին տրամադրվել է դրամական պարգև՝ յուրաքանչյուրին 20 000 դրամ:

Հոգացել է «Էջմիածնի ավտոդպրոց» ՍՊԸ-ում սովորող զորակոչիկների երթևեկության ծախսերը:

### *Քաղաքաշինության և հողօգտագործման բնագավառում*

Անմիջական վերահսկողություն է իրականացվել համայնքի հողային ֆոնդի նպատակային օգտագործման համար:

Սահմանված կարգով տրվել է համայնքի վարչական սահմաններում իրականացվող թվով 3 բնակելի տան, թվով 1 ավտոտեխսպասարկման կայանի և սպորտդահլիճի և հանդիսությունների՝ սրահի վերանորոգման շինարարության թույլտվություն:

Կազմվել է հողային հաշվեկշիռ:

### *Կոմունալ տնտեսության և բարեկարգման բնագավառում*

1. Համայնքի Անի թաղամասում պարբերաբար կատարվում են կոյուղագծերի և դիտահորերի մաքրման աշխատանքներ:

2. Տ. Անդրեասյան, Վ. Մամիկոնյան, Արցախ, Սայաթ-Նովա, Մուշ, Տիգրան Մեծի 1-ին, 2-րդ, 5-րդ փողոցներում կատարվել են ավազ-խճաքարով հարդարման և փոսալցման աշխատանքներ: Վերանորոգվել է համայնքի Կոմիտաս փողոցը Մ. Բաղրամյան փակուղուն կապող կամրջակը:
3. Համայնքի Շառլ-Տիրան Թեքեյան և Մ. Մաշտոց փողոցներում կատարվել են բարեկարգման և ասֆալտապատման աշխատանքներ:
4. Ընթացիկ վերանորոգման է ենթարկվել Խ. Աբովյան 1-ին շենքի տանիքը, հարդարվել է Գինեվետ 46-րդ շենքի մուտքը:
5. Արցախ փողոցում գազագծի անցկացման համար կատարվել են նախագծահետազոտական աշխատանքներ, ինչից հետո փողոցում անցկացվել գազագիծ:
6. Վերանորոգվել է համայնքապետարանի տարածքի ոռոգման ջանցը:
7. Համայնքի փողոցներում պարբերաբեր կատարվել են գիշերային լուսավորության համակարգի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ:
8. Կատարվել են համայնքի հանդիսությունների սրահի և սպորտդահլիճի, ինչպես նաև համայնքապետարանի տանիքի վերանորոգման նախագծահետազոտական աշխատանքներ:
9. Կապիտալ նորոգման է ենթարկվել համայնքի սպորտդահլիճը և հանդիսությունների սրահի մի մասը:
10. Վերանորոգվել է համայնքապետարանի շենքի տանիքը:
11. Ձմռան ամիսներին կատարվել են ժիջհամայնքային ճանապարհների և համայնքի գերեզմանատան ճանապարհի ձնամաքման աշխատանքներ:
12. «Մաքուր Հայաստան» համապետական ծրագրի շրջանակներում Մուսալեռ համայնքում պարբերաբար անցկացվել են շաբաթօրյակներ:

*Համայնքի ղեկավարի գործունեությունը առևտրի և սպասարկման բնագավառում*

Համայնքի ղեկավարի կողմից տրվել է ոգելից խմիչքների, ծխախոտի, վառելիքաքսայուղային նյութերի վաճառքի թույլտվություններ:

Հանրային, կենցաղային ծառայությունների ոլորտում հսկողություն է իրականացվել:

*Առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում*

Նպաստում է համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը: Պարբերաբար տարվում են ֆուտբոլի խաղահրապարակի մաքրման, բարեկարգման և պահպանման աշխատանքներ: Ոլորտի զարգացմանն է միտված համայնքի սպորտդահլիճի վերանորոգումն ու հետագայում նաև համապատասխան մարզագույքով զինումը:

*Կրթության, մշակույթի և երիտասարդության հետք տարվող  
աշխատանքների բնագավառում*

Մայրության և գեղեցկության տոնի առթիվ զինվորիների մայրերին, Ֆրանց Վերֆելի անվան դպրոցի, համայնքի մանկապարտեզի, փոստային բաժանմունքի, բուժամբուլատորիայի, համայնքապետարանի կին աշխատակիցներին տրվել են նվերներ և բացիկներ: Զինվորների մայրերին տրամադրվել է նաև ֆինանսական օժանդակություն:

Կատարվել են «Էջմիածնի ավտոդպրոց» ՍՊԸ-ում սովորող թվով 2 զորակոչիկի երթևեկության ծախսերը:

Մայիսյան եռատոնի կապակցությամբ դրամական պարգևատրում է ստացել Հայրենական պատերազմի թվով 1 մասնակից, Ղարաբաղյան պատերազմի ժամանակ զոհված ազատամարտիկների թվով 4 ընտանիքների տրվել է դրամական օգնություն: Տոնի կապակցությամբ կազմակերպվել է միջոցառում:

2017 թվականի Ֆր. Վերֆելի անվան միջնակարգ դպրոցի շրջանավարտների ավարտական երեկոյի կազմակերպմանն աջակցելու նպատակով տրամադրվել է 100 000 դրամ:

Գիտելիքի օրվա կապակցությամբ Մուսալեռ համայնքի Ֆրանց Վերֆելի անվան միջնակարգ դպրոցի առաջին դասարանցիները այս տարի էլ, ձևավորված ավանդույթի համաձայն, նվեր են ստացել պայուսակներ և գրենական պիտույքներ:

Օժանդակություն է ցուցաբերվել համայնքի երիտասարդ ակտիվիստների և համայնքի ազատամարտիկների կողմից ապրիլյան քառօրյա պատերազմի տաթելիցին նվիրված ֆլեշմոբի կազմակերպմանը:

Մանկապարտեզում պարբերաբար կատարվում է դեռատիզացման, դիզինֆեկցման աշխատանքներ:

### *Գյուղատնտեսության և բնապահպանության բնագավառում*

Նպաստել է ինքնակամ հողազավթման կանխմանը: Համայնքում կատարվել են կանաչապատման, աղբի մաքրման և տեղափոխման աշխատանքներ:

Գյուղատնտեսական աշխատանքների ընթացքի կարգավորման համար վերանորոգվել է համայնքի տրակտորը:

### Առկա հիմնախնդիրները

1. Համայնքի մի շարք փողոցներ ունեն կապիտալ նորոգման, ասֆալտապատման կարիք:
2. Համայնքի Լուի Դարթիժ դյու Ֆուրնեի փողոցը, որը կից է Երևան-Էջմիածին մայրուղուն, ամբողջությամբ ապահովված չէ գիշերային լուսավորությամբ:
3. Համայնքի որոշ փողոցներ զուրկ են գիշերային լուսավորությունից, որոշ փողոցներում էլ ապահովված չէ գազաֆիկացումը:
4. Համայնքի գերակա խնդիրներից մեկը Խ. Աբովյան բազմաբնակարան շենքի վթարային վիճակն է:
5. Համայնքը զուրկ է մշակութային օջախներից, ինչը հանգեցնում է երիտասարդությանը նշված ոլորտից հեռանալուն և դրանից բխող կրթական, դաստիարակչական խնդիրների առաջացմանը:

6. Համայնքում գործող միակ հանգստի գոտին տեղակայման և փոքր մասշտաբի պատճառով հասանելի չէ շատերին:
7. Գյուղում առկա միջհամայնքային ճանապարհը զուրկ է երթևեկության նշաններից, անվտանգ երթևեկություն ապահովելու համար անհրաժեշտ է դրանց տեղադրումը:
8. Առկա գյուղտեխնիկայի ցածր օգտավետության պատճառով գյուղատնտեսությամբ զբաղվելը սակավ արդյունավետ է:

Մուսալեռ համայնքի ղեկավար  
23.01.2018թ.



Է. Հովհաննիսյան

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի  
ղեկավարի հաշվետու ժողովի

2018 թվականի հունվարի 23-ին՝ ժամը 14.00-ին, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանում տեղի ունեցավ համայնքի ղեկավարի հաշվետու ժողով:

Ժողովին ներկա էին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ Լարիսա Մուրադյանը, համայնքի ավագանու անդամներ, համայնքապետարանի, մանկապարտեզի աշխատակիցներ և համայնքի բնակիչներ:

Համայնքի բնակիչները իրենց գոհունակությունը հայտնեցին համայնքում կատարված փողոցների ճանապարհների ընթացիկ վերանորոգման՝ աշխատանքների վերաբերյալ: Սակայն նշեցին նաև, որ մասնակի բարեկարգումը ամբողջովին չի լուծում խնդիրը՝ շատ փողոցներ դեռ կարիք ունեն մեծածավալ կապիտալ նորոգման աշխատանքների:

Քանի որ գյուղի տրակտորը գյուղատնտեսական աշխատանքների եռու նրջանում երբեմն չի բավարարում աշխատանքների իրականացման համար, բնակիչները առաջարկեցին նոր գյուղտեխնիկա ձեռք բերել: Ամռան ամիսներին գյուղի որոշ հատվածներում խմելու ջրի խնդիր է լինում:

Համայնքի բնակիչները բարձրացրին նաև պետության կողմից սուբսիդավորվող վարկերի ստացման դժվար հասանելիության հարցը:

Խ. Աբովյան շենքի բնակիչների անհանգստության պատճառներից մեկն էլ նշված բազմաբնակարան շենքի վթարային լինելու, հետագայում վտանգ ներկայացնելու հարցն էր: Վերջիններս խնդրեցին լուծման տարբերակներ գտնել՝ շենքի ամրացման կամ որևէ այլ տարբերակով:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց 2017 թվականի ընթացքում կատարված աշխատանքները, խոսեց հետագա ծրագրերի մասին, պատասխանեց ներկաներին հուզող հարցերին:

Նա հայտնեց, որ համայնքապետարանի համար նույնպես առաջնահերթ են համարվում այնպիսի աշխատանքների իրագործումը, ինչպիսիք են խմելու ջրագծերի

անցկացումը, փողոցների և ճանապարհների բարեկարգումը, համայնքի բնակիչներին անհրաժեշտ կոմունալ-կենցաղային պայմանների բարելավումը: Համայնքի ղեկավարն իր խոսքում հայտնեց, որ այս տարի էլ կան համայնքապետարանի առջև հստակ դրված նպատակներ, որոնց իրագործմանը պետք է հասնել ընթացիկ տարվա ընթացքում: Նպատակներից որոշներն էլ անմիջականորեն առնչվում են բնակիչների բարձրացրած հարցերին: Ուստի համատեղ ջանքերի շնորհիվ համայնքում այս տարի ևս կիրականացվեն համայնքում բնակիչների կենսական կարիքների բավարարման և մի շարք այլ հարցերի լուծմանը միտված աշխատանքներ:

Աշխատակազմի քարտուղար



Գ. Սայադյան